Ալաշկերտի դաշտի միջավայրն կը միանան, ուր կատարեալ գետի կերպարանք ստանալով՝ կը հեռանայ Մուրատ[1] անուամբ։

Մուրատի երկու ճիւղերն կը յորջորջուին Շեռեան և Մուրատ։

Շեռեան Բաղրեւանդայ արեւմտեան կողմէն կիջնայ դէպի յարեւելս, Ալաշկերտի դաշտի հարաւն և Ղլիճ—կետուկի հիւսիսային ստորոտն քերելով կանցնի, իսկ Մուրատ յարեւմուտս կոյս հոսելով հանդէպ Գարաքիլիսայի, ուստի 1 ժամ ի հարաւ արեւմուտս Գարաքիլիսայի միանալով Մուրատի իբրև կանոնաւոր գետ մի կը քերէ Կեռեէ լեռան արեւելեան ստորոտն, կանցնի Անդափի, Մանազկերտի և Ապահունեաց գաւառներու միջով, իւրաքանչիւր գաւառ երկուքի կը բաժանէ, աջ ու ձախ դաշտային և լեռնային մասեր թողլով։

Շեռեան իւր սկզբնաւորութիւնը կառնու Բիւրակնեան լեռներու յարեւելս գտնուած Գարաեազու լեռնադաշտի արեւելեան երեսէն, յարեւելս յարեւելահիւսիս և հիւսիս հոսելով, կիջնայ Խալեազի լեռնադաշտն, այս տեղ գետ չիլնար աջ կողմէն Մերկէ-Միր լեռնէն եկած առատ սնունդ առած, 3—3 ½ ժամու չափ եկ Խալեազը ճեղքելով՝ ուղղակի միջից կանցնի, ի ձախ թողլով վարելահողեր և ընդարձակ անհաշիւ մարգագետիններ, որք մինչև Դռամ կը տարածուին։ Խալեազի վերջաւո-

---

1. Դէտէ Մուրատ անունով մի ուխտատեղի կայ Ամատ գիւղի բարձունքը՝ բարձր քարալերան մի գագաթն, որոյ ստորոտն եկ կայ Դէտէ Մաքսուտ, ուստի գետակ մի կը հոսի ի դաշտ. այս լեռնեն խոնար Դէտէ Մաքսուտի կամ Թուրքմեններու և կամ Ամատա ջուր անուամբ։